



ԱՍՏՆԱԳԻ ԺԳՆ.-ԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ
ԿՈՄԻՏԵ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ
ՎԱՅՐԻԱՃ ՊՏՈՒՂՆԵՐԸ
ՎՈՐՊԵՍ ՍՆՆԴԻ
ՄԹԵՐՔՆԵՐ

ՀԴ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՆՎԵՆՏԻՆՈՒՐՈՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԻՏԼԻՍ—1985 թ.

62

ԱՍՖԻՆԶ ԺՈՂԿՈՄԻՏԻՆ ԿԻՑ ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ

30 JUL 2010



634.2/42.92

ԱՆԴՐԿՈՎԿԱՄԻ ՎԱՅՐԻԱՋ ՊՏՈՒՂՆԵՐԸ

ՏԱՆՁ, ԽՆՁՈՐ, ԶԿԵՌ, ՀՐՇԱԿ ՅԵՎ ՍԵՐԿԵՎԻԼ

Պրոֆեսոր ՎԻՆԱԳՐԱԴՈՎ - ՆԻԿԻՏԻՆ

Գյուղատնտեսական ԻՆՅՈՒԻԻՆ Ն. Պ.

ԹԻՖԼԻՍ
1935



43554-63

Պատասխանատու խմբ. Հ. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
Տեխ. խմբ. Ի. Ի. ՏՐՈՒՖԱՆՈՎ
Քարգմ. Ս. ՄԱՆՈՒԿՈՂԼՅԱՆ

Տպարան «Տեխնիկա դա Շրոմա», Կեցխովելիի փ. № 5

Պատվեր 693

Գլավիտ 1307

Տիրաժ 2150

I ՎԱՅՐԻԱՃ ՊՏՈՒՂՆԵՐԻ ԴԵՐԸ.

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության յերկրորդ հնգամյակի պլանի իրագործման համար ձեռք առած հիմնական միջոցառումների թվում մտնում է բնակչության սնունդի մթերքների արտադրությունը 2-3 անգամ մեծացնելու խնդիրը:

Դրա համար մոբիլիզացիայի պիտի յենթարկվեն վե՛լ միայն կուլտուրային գյուղատնտեսության բոլոր հնարավորություններն ու մեջոցները, այլ և բնության ունեցած աղբյուրները:

Սնունդի գործի մեջ առանձին նշանակություն ունեն պտուղները, վորոնց դերը զնահատված է մարդկության գոյության ամենահին զարգացման ժամանակներից: Վայրի ծառերի համեղ, դիետիկ, սննդավոր և բուժական հատկությունները պատճառ են յիղնլ այն բանին, վոր հազարավոր տարիների ընթացքում վայրի ծառերից լավագույն պտուղները անդիտակցաբար իրեն համար ոգտագործելու ընտրության միջոցով մարդկության սանդձեց առաջին կուլտուրային տեսակներն ու այգիները:

Բայց ժամանակակից կուլտուրային պտղաբուծությունը, չնայած խորհրդային կառավարության ձեռք առած միջոցներին, դեռ չէ հասնլ այն չափերին, վոր կարողանար առատությամբ բավարարել աշխատավոր բնակչության դեպի պտուղներն ունեցած բարձր պահանջները: Գոյություն ունեցող կուլտուրային պտուղների տնկարանների հողաբաժինը ամբողջովին դեռ չի բավարարում այդ պահանջները: Բացի դրանից, նոր այգիներ ստեղծելու համար պետք է բավականին ժամանակ, վորովհետև նրանք տալիս են նորմալ բերք միայն 8-12 տարի հետո: Բացի այդ, այգիներ քցելը պահանջում է հսկայական դրամամուծումներ:

Դրա համար ել կուլտուրային մրգերի հետ միասին պետք է ոգտագործվեն և վայրի ծառերի պտուղները, վորոնք հանդիսանում են այդ կուլտուրաների նախահայրերը:

Վայրի պտուղներն ըստ մեծի մասամբ իրենց մեջ պարունակում են մարդու սնունդի համար նույն ոգտակար նյութերը,

ինչ վոր կուտուրայինները, միայն յերբեմն մի քիչ պակասած չափով: Նրանց մեջ կա՝ շաքար, յուղեր, թրթվուկներ, աղեր, սպիտակուցներ, ոսլա և այլն. նկատվում է նույնպես նրանց մեջ դուրեկան հոտի և համի նյութեր, վերջապես պտուղները հա-
րուստ են վիտամիններով, վորոնք նպաստում են մարդու որդա-
նիզմում մի շարք պրոցեսների կարգավորմանը և պաշտպանում են նրան հիվանդագին փոփոխումներից:

Հողա-կլիմայական և լեռնային բերեֆի պայմանների մեծ բազմազանություն հետ միասին, Անդրկովկասը յուր անտառեն-
բուս ունի հսկայական քանակությամբ բազմատեսակ պտուղներ,
վորոնք գտնվում են հոծության մեծ քանակությամբ: Բացի դրա-
նից, տեղական առանձնահատուկ պայմանների, հողի պտղավե-
տություն և բարենպաստ կլիմայի շնորհիվ, նկատվում է բացա-
ռիկ բերքատվություն և մի շարք պտուղների տեսակների լավ
հատկություն ունենալը: Դրա հետ միասին, պատահում են վայրի
պտուղների առանձին տեսակներ, վորոնք իրենց մեջ մարդու
համար ոգտակար նյութեր պարունակելու կողմից (եթերային յուղ-
թթվուկներ և այլն), նույն իսկ գերազանցում են կուլտուրային
մրգերին:

Վայրի պտղաբերներն ընդհանրապես տեսակետով առաջավոր
տեղերից մեկն են բունում այն ծառերը, վորոնք պատկանում են
կտկացեղերին. դրանց մեջ ել իրենց բերքատվությամբ Անդր-
կովկասում հայտնի յեն տանձենին, խնձորենին, սերկեխը 45-ից
մինչև 85 հազար տոնն հումուկով, վորը կազմում է Անդրկով-
կասի բոլոր վայրի պտուղների բերքի մոտավորապես կեսը:

II ՏԱՆՁԵՆԻ.

Ծառի ձևով և յերկառակեմությամբ. Անդրկովկասի պայման-
ներում կտկայիններից ամենամեծ արժեք ունի տանձենին: Այն
իրենց ներկայացնում է բուրգաձև մի ծառ՝ գեղեցիկ բնով մինչև
12 մետր բարձրությամբ: Բարենպաստ պայմաններում տանձենին
բավականին մեծ չափերի յե հասնում, այսպես որինակ՝ Մվանե-
տիայի կենտրոն Միստի գեղեզմանոցում մի տանձենի կա բու-
սած, վորի խոռոչի մեջ կարող են տեղավորվել մի քանի մարդ:
Նրա տարիքը 250-ից ավել է:

Տանձենու բունը բավականին ուղիղ է, խիտ անտառում
բուսնելու դեպքում, նա ձգվում է դեպի վեր և կորցնում ներ-

քելի կողերի յուր հիմնական մայրացու ճյուղերը, վորը դժվարա-
ցնում է պտուղների հավաքը: Աղատություն մեջ բուսնող տան-
ձենին ունի վոչ բարձր բուն, ճյուղավորված և դեպի ներքև
թեքված խիտ դադաթով: Այդպիսի ծառի վրա պտուղն հավաքելու
համար շատ հեշտ է առանց սանդուխքի ոգնություն բարձրա-
նալը:

Տանձենու արմատները հողի մեջ շատ խոր են թաղված և
տալիս են նրան ամրություն քամիների դեմ, տերևները տեղա-
վորված են յերկար տերևակոթերի վրա—ձվաձև են, փայլուն և
մանր ատամնավոր:

Ծաղիկը, բեռքը և պտուղները հասնելը: Ապրիլ ամսին, իսկ
լեռնային բարձր գոտաներում՝ մայիսին տանձենին ծածկված է
լինում հսկայական քանակությամբ սպիտակ ծաղիկներով, վո-
րոնք տեղավորված են վահանաձև վողկույղներով: Ծաղիկները
փոշոտում են խաչաձև մեղուների և այլ միջատների միջոցով:

Տանձենու աճման ծովի մակերևույթից ունեցած բարձրու-
թյունից, հողա-կլիմայական պայմաններից, ցեղային առանձնա-
հատկություններից, նույնպես և նրան շրջապատող անտառի խը-
տությունից կախված, պտուղների հասունանալը սկսվում է ոգոս-
տոսից և տևում մինչև հոկտեմբերի վերջը: Ավելի վաղ հասունու-
թյուն առաջանում է Ագրեջանի և Հայաստանի հարավային
շրջանների չոր կլիմա ունեցող անտառներում: Աղատության մեջ
բսնող ծառերի ծաղիկն ու պտուղների հասունանալը նույնպես
մի քանի որ առաջ է կատարվում, քան անտառներինը:

Պտղի ձևով և հասկությունը: Պտուղը տանձաձև է կամ յեր-
բեմն գնդաձև. մաշկը դույնը սովորաբար կանաչավուն է կամ
դեղին, յերբեմն մի կողմում վոչ շատ կարմրությամբ: Պտղի փափ-
կամիսը սպիտակ է, հաճախ պնդացած հատիկներով, այսպես կոչ-
ված քարային վանդակիկներով, վորոնք լրիվ հասնության և
պահելու դեպքում փոխվում են շաքարային նյութերի: Պտղի մե-
ծությունը յերկարությամբ տատանվում է 3-ից մինչև 6 սան-
տիմետրի, յերբեմն ել ավելի: Յուրաքանչյուր տանձի միջուկում
հինգ բնիկ կա, ամեն մեկի մեջ յերկու կտիկ: Սերմերը սև կամ
դարչնագույն են, ձվաձև, մի ծայրը սուր: Պտղակոթը յերկար է
և պտղի հասունանալու դեպքում շատ հեշտությամբ պոկվում է
պաղաճյուղից առանց վերավորելու վերջինիս: Խակ, չհասաց
պտղի քաղիլը մեծ մասամբ փչացնում է պաղաճյուղը, վորն առա-
ջացնում է բերքատվության նվազում: Վայրի տանձերի համային

հատկութիւնները լինում են տարբեր. տտիպ, թթու, և նույն իսկ դառնալուծանների հետ միասին, մեծ մասամբ հանդիպում են քաղցրաւուծ և դուրեկան հոտ ունեցող պտուղներով ծառեր:

Սովորաբար վայրի տանձերի տեսակների մեծագույն մասը նրանց հալաքելուց հետո շատ արագ «հասունանում» են, փոխվում են համով և դառնում հյութալի: Տեսակներ կան, վոր պահելու ժամանակ արագ կերպով սեանում են, Այդ առաջանում և նրանից, վոր տանձերի մի քանի տեսակները հատուկ սնկիկներով ազդեցութեան հետեանքով յենթարկվում են բուսալայի: Իբար վրա մեծ քանակութեամբ կիտված ձևով պահելու դեպքում, շատ արագ պտուղները բորբոսնում են (փթում), առանձնապէս տաք յեղանակներին և փակ շենքերում, յերբ դրված են լինում կիտուկներով կամ պարկերով, այդ դեպքում նրանք տաքանում են, արտաբերում ածխաթթու և կարող են բոլորովին անպետքանալ:

Անմառ պայմաններ: Տանձինն բուսնում և անտառների ներքե և միջին մասերում բարձրանալով մինչև ծովի մակերկիւն վույթից 1800 մետր բարձրութեամբ սարերի վրա: Բուսնելու և բերքատուութեան ամենալավ շերտը գտնվում և 600-ից մինչև 1000 մետր բարձրութեան վրա: Վորքան բարձր, դեպի սարն և բարձրանում տանձինն, այնքան սակավ և լինում բերքատու տարիների թիւը և քիչ նրա բերքատուութեւը:

Առանձին կանգնած ծառերը 10-20 անգամ ավելի պտղաբեր են, քան թե անտառի խորքում աճող տանձինները: Աղատութեան մեջ բանող տանձինների բերքատուութեւը հասնում և յերբեմն 2 ցենտների յուրաքանչյուր ծառից, իսկ խիտ անտառներում ընդամենը 10-15 կիլոգրամ: Մեկ հեկտարում նորմալ թփուտներում տանձենու միջին բերքատուութեւը հասնում և մինչև 2 տոննի:

Տանձինն գլխավորապէս բուսնում և հարավային, ապա արեւլայն և արեւմտյան լանջերին: Նրանից քիչ և լինում հյուսիսային սովերոտ և ավելի ցուրտ լանջերում և այնտեղ վատ բերքաբեր և այն: Շատ թեք լանջերում և ժայռոտ տեղերում տանձինն չի աճում: Առանձնապէս տանձինն տարածված և լեռնային դարավանդներում և լեռների միջին շերտի խորը հողաշերտով հովիտներում:

Տանձինն, յերիտասարդ և միջին հասակում կտրելիս շրուղեր (ծիլ) և տալիս կոճղից, լավ և տանում նաև վերեւի մասի

կտրելի վարը նորոգում, թարմացնում և նրան բազմաթիւ նոր շրուղերով, այդ դեպքում բերքաբեր են դառնում արդեն 3-րդ տարին:

Այդ շրուղերը յերբեմն ոգտագործում են վայրի տանձինները աղնիւլ տեսակով պատվաստելու համար:

Տանձինները սովորաբար բուսնում են խմբերով, վորը հեշտացնում և նրանց մոտ անցնելը և լեռներում ստեղծում և հարմարութեւն բերքը հալաքելու համար:

Խիտ անտառում տանձը բարձր ծառերից սովորաբար հալաքում են նշդարից կամ հացենուց կտրած յերկար ձողի միջոցով թափ տալով: Այդպիսի տեղերում սանդուխք գործածելն համարյա թե ավելորդ է: Անտառում խոտի և մամուռի ներկայութեւը պաշտպանում և պտուղը կեղտոտելուց: Ազատ տեղերում յերիտասարդ ծառերից տանձ հալաքելը կատարվում և ուղղակի թափ տալու միջոցով: Ծեր և մեծաքանակ բերքով ծառերի ներկայութեան դեպքում ոգտագործում են հասարակ ձևի սանդուխքներ:

Հավաքի նիւնական տեղեր: Տանձը հալաքելու ամենաարդունավետ տեղերը ծառայում են ծովի մակերկուցից 600—1000 մետր բարձրութեան վրա ընկած լայնատերեւ անտառների շերտեր:

Տանձինն ուղղեկցող ծառերի տեսակներն են՝ կաղնին, հացին, նշդարենին, ախլուն և ուրիշները:

Արտադրանքի (տանձի) արդյունաբերական հալաքի համար հիմնական շրջաններն են—Բորժոմի (Թորի), Ղուբայի, Հարավ-Ոսեթիայի, Ալազկերդու, Ղարայաղի, Զանգեզուրի, Իջևանի և ուրիշ շրջանները:

Անդրկովկասում վայրի տանձի բերքի ընդհանուր քանակութեւնն առատ բերքատուութեան տարին կարող և հասնել մինչև 35000 տոննի, իսկ միջին բերքատուութեան ժամանակ մինչև 17000 տոննի:

Անտառային թափուղներում տանձի առատ բերք սովորաբար լինում և 3 տարին մեկ անգամ, իսկ ավելի բարձր և ցուրտ տեղերում—4 տարին մեկ անգամ: Մոտավորապէս նույնպիսի հերթականութեւն նկատվում և նաև վոչ բերքաբեր տարիների վերաբերմամբ: Մնացած տարիները բերքը լինում և միջակ: Առանձին բուսած ծառերի համար անբերրի տարիներ համարյա թե չի լինում, իսկ մեծ բերք լինում և յերկու տարին մեկ անգամ: Ծաղկ-

ման ժամանակ յեթե չեն լինում ցրտեր, համարյա թե ամեն տարի շրջանում բերք է լինում:

Տանձնակների յերկրագլխաց տեսակներ: Բացի սովորական տանձից, Անդրկովկասում հանդիպում են այսպես կոչված—ուռատերեններ, նեղ ու յերկար մոխրագույն տերեւներով, նման վոլորտի: Այդ տանձենին 6 մետրից բարձր չե, շատ խիտ դադաթով և 30 սանտիմետրից վոչ ավել հաստությամբ բունով: Ճյուղերը փշեր ունեն, դրա համար ել պտուղն հավաքելու համար զազաթն անմատչելի է:

Ուռատերեւ տանձենու արմատային սխտեմը յերկու տնգամ ավելի ուժեղ է, քան թե սովորական տանձենունը. դրա հետեւ լանքով ել նա շատ հեշտությամբ է տանում յերաշտը. ըստ մեծի մասամբ բուսնում է անտառներից դուրս, արևոտ, քարքարոտ թեքվածքներում, չոր ձորերում և միջահողերում:

Նա շատ անգամ պատահում է Ադրբեջանի, Հայաստանի և նույն իսկ արևմտյան Անդրկովկասի չոր շրջաններում:

Նրա պտուղները մանր են 2—2,5 սանտիմետր մեծությամբ և համարյա թե գնդաձև են, յերկար պողպակով, Ծառը աճում է դանդաղ, բայց ամեն տարի առատ բերքատու յե: Այդ տանձերի մեջ առանձնապես շատ կան քարային վանդակիկներ, վորոնք յերբ պտուղը յերկար է պահվում, դառնում են շաքարային նյութեր: Պտուղները ծառի վրա մնում են յերբեմն նույն իսկ տերեւները թափվելուց հետո ել, այդ ժամանակ նրանք ավելի քաղցրություն են ունենում:

Ծառը ցածր հասակ ունենալու հետևանքով պտուղները հասնելու դեպքում շատ հեշտությամբ թափվում են.

Սովորաբար այդ տանձենին բսնում է լսբերով, վորը կախված է նրա արմատների առատ ծիլեր տալու ընդունակության հետ:

Դրան շատ մոտ է նույն չափի փշատատերեւ տանձենին, մի քիչ կարճացած և ավելի լայն տերեւներով ու նույնպիսի քաղցրությամբ ամուր, գնդաձև պտուղներով: Այն աճում է նույնպիսի ել պայմաններում, Այդ յերկու տանձենիներն ել կարող են ծառայել չոր շրջաններում կուլտուրային այդեդործության համար պատվաստման գեղեցիկ նյութեր:

Այդ տանձենիները խիտ անտառներում չեն պատահում: Բուսնում են նրանք թավուղների թփուտներում, դաշտային տիկու, կարճ կաղնու և ուրիշ տերեւավոր թփուտների հետ միասին—չբարձրանալով սարը 900 մետրից ավելի:

Պտուղների (պտխտա) հավաքը մեծ մասամբ ունի դործածական նշանակություն հարևան դաշտերի կոլտոգնիկների և ագարակների բնակիչների համար, վորտեղ բուսնում են այդ տանձենիները: Յերբեմն այդ պտուղները յերեւում են նաև շուկայում. բայց ի նկատի ունենալով ծառերի ցրվածությունը և ընդհանուր բերքի աննշանությունը, այդ տանձերի հավաքը չունի արդյունաբերական նշանակություն:

III ԽՆՁՈՐԵՆԻ.

Ծառի և պղի բնավորությունը: Խնձորենին իր ծառի արտաքին տեսքով նման է տանձենուն, դանդաղանկիով նրանից միայն բոլորով (12 մետր) և արմատի վոչ այնքան ուղիղ ձևով, վորն ավելի տարածված է:

Խնձորենու տերեւները մի քիչ մեծ են, ավելի պակաս կոշտ, ձգված ձվաձև և մի քիչ խավոտ:

Ծաղիկներն արտաքին կողմից մի քիչ վարդագույն են, փոշոտվում են միջատներով և յերևում են բավական մեծ քանակությամբ դարնանը—ապրիլի վերջին և մայիսին—կախված տեղի բարձրությունից:

Խնձորենին ավելի զգայուն է ցրտին, վորն առանձնապես ազդում է ծաղկի վրա, պակասեցնելով կամ բոլորովին վոչնչացնելով դալիք բերքը:

Ծնորհիվ այն հանգամանքի, վոր այդքան զգայուն է ցրտի վերաբերյալ, այն չի բարձրանում սարն այնպիսի բարձրությամբ ինչպես տանձենին. նրա տարածման սահմանադիմ է 1200 մետրը: Նրա հասակի և բերքատվության միջին չափն ընկնում է ծովի մակերևույթից 600—900 մետր բարձրության վրա գտնված գոնայում:

Վայրի խնձորենու պտուղներն ԱՍՖՅՆ-ում, ունեն 2-ից մինչև 4,5 սանտիմետր մեծություն: Գույնով լինում են կանաչավուն, դեղնավուն, կարմիր կամ կարմրավուն: Համի կողմից համեմատած տանձերի հետ, ունեն բավականին շատ բավազանություն, սկսած տափալությունից, դառնությունից մինչև թթուն ու մինչև անգամ բոլորովին քաղցր:

Խնձորենին համեմատած տանձերի հետ իրենց մեջ պարուհանում են ավելի վիտամիններ և լեկտինական նյութեր: Ի նըկատի ունենալով համի, դինամիկական և ուրիշ առավելու-

թյունների այդպիսի մեծ բաղմապիտեությունը, խնձորն ավելի աչքի ընկնող չափով և կլորավորված գործածելով վերամշակման համար (հյութեր, դոնդող, լեկտինաներ, սիդրաներ, պաստիլաներ, պտղադինի և այլն):

Խնձորենու բուսնելու հողային պայմանները տանձենու նման են, բայց ունի ավելի պակաս խորությունը արմատային սխտեմ և կարող և աճել ավելի մանր ու նույնիսկ քարքարոտ հողերում: Տանձենու նման այն ավելի շատ հանդիպում են անտառների բացատներում և անտառային մարգագետիններում: Նրանից շատ կա անտառից մաքրված մարգագետիններում և հողաշերտերում:

Բեբեափուրյուն: Ազատություն մեջ բուսնող խնձորենին աչքի չի ընկնում մեծ բերքատվությամբ: Անտառներում բուսնող խնձորենիների բերքատվությունը պակաս է, և վորքան խիտ են նրան շրջապատող ծառերի տեսակները, այնքան պակաս է բերքատվությունը: Ազատություն մեջ բուսնող միջին տարիքի ծառի խնձորի բերքը հասնում է մինչև 1—2 ցենտների, իսկ խիտ անտառում ընդամենը՝ 10—15 կիլո:

Անդրկովկասում չկան մաքուր խնձորենու թավուղներ: Սովորաբար այն հանդիպում է անտառի լայնատերև ծառերի դանազան տեսակների հետ խառն ձևով և համարյա այն պայմաններում ու տեղերում է բուսնում, ինչ վոր տանձենին:

ԱՍՖՆՀ-ում լրիվ բերքատվության ժամանակ վայրի խնձորների պտուղների ընդհանուր բերքը հասնում է 25 հազար տոննի: միջին բերքատվության ժամանակ՝ մոտավորապես 12 հազար տոննի: Բերքատվության հերթականությունը միատեսակ է տանձենու հետ:

Շնորհիվ խնձորենու կարճ բոյի և լայնատաքած գագաթի, խնձորի բերքն ավելի հեշտ է հավաքել, քան տանձինը:

Պահելու և տեղափոխելու ժամանակ խնձորենու պտուղն ավելի դիմացելուն է քան տանձինը:

Խնձորենին ավելի շատ տարածված է անտառաշրջնի նույն հիմնական հոծություններում, վորտեղ և տանձենին:

IV 2 4 Ե Ռ.

ԱՍՖՆՀ-ում զկեռը տարածված է լայն կերպով մինչև 5 մետր բարձրությամբ փշոտ թփերի ձևով: Զկեռի գլխավոր թավուղները

տարածված են Լինքորանի, Ղարաբաղի, Զանգեզուրի անտառային հոծություններում:

Մեծ մասամբ հանդիպում են բացատներում, ճանապարհների յերկարությունը, լեռնային թեքվածքներում և անտառի կտրված մասերում գլխավորապես լույս տեղերում:

Բավականին առատ բերքաբեր է, գլխավորապես լեռների ներքևի շերտերի արգավանդ հողերում: Զկեռն աճում է նաև միջին շերտերում, բայց այնտեղ թույլ բերքատու չէ:

Պտուղը ձվա-գլանաձև է, մինչև 3 սանտիմետր մեծությամբ, ծայրին բաժակաթերթի մնացորդով: մեջն ունի քարանման կլատիկներ:

ԱՍՖՆՀ-ում զկեռի բերքը լրիվ բերքաբեր տարում հասնում է մինչև 14000 տոննի, իսկ միջակ բերքատվության դեպքում մինչև 9000 տոննի:

Զկեռենու պտուղները բավականին պինդ են և շատ յերկար են մնում ծառի վրա, նույնիսկ տերևները թափվելուց հետո ել այն մնում է ճյուղերի վրա:

Պտուղներն ստիպված են հավաքել ձեռով: Նոր հավաքած պտուղները տաիպին և անպետք գործածության համար, բայց յերբ քիչ պահվում են, նրանց մեջ առաջ է գալիս բուրբուռ, վորից և պտուղները դառնում են փափուկ, ավելի հյութալի և քաղցր:

Զկեռն հանդիսանում է տեղական բնակչության սիրած միջոց և բավականությամբ գործ են ածում այն հում դրուկային դրալի մեծ քանակությամբ:

Զկեռից կարելի չի պատրաստել լավ հատկության մրգախմոր և պավիլդո: Յերբ զկեռից պատրաստում են չոր նյութ, պտուղները չորացնում են ամբողջությամբ: Հում պտուղի մոտ 18%-ն է չոր նյութ դուրս գալիս:

V Ն Ր Շ Ա Կ

Անդրկովկասում հրշակը պատահում է մի քանի տեսակներով, վորոնք իրարից տարբերվում են և ծաղկով և պտուղներով (կարմրագույն, նարնջագույն, սև և շագանակագույն): Հրշակը սովորաբար բուսնում է փշոտ, ճյուղատարած թփերի ձևով և շատ քիչ դեպքում փոքր, մինչև 6 մետր բարձրության ծառի նման:

Մեծ մասամբ հանդիպում է լեռների ներքևի առատ կերպով լուսավորված թեքվածքներում, և նույն իսկ չոր տեղերում: Ան-

տառը կտրելուց հետո, հրշակը շատ արագ աճում է և կաղմում համաառարած թավուղներ, վորոնցով լիքն են անտառային արոտատեղերը և կտրելի անտառամասում, առանձնապես Աղբբեջանում: Հրշակ շատ կա Լենքորանի, Թոռլի և Ջանգեղուրի լեռնային հոծություններում:

Բաց տեղերում հրշակն առատ բերքաբեր է. նրա հատապտղի նման պտուղները մանր են և պարունակում են քարանձանի կտիկներ և փոքր քանակությամբ փափուկ մաս, վորն ալիլի քաղցր է դառնում լավ հոտնելու դեպքում, առանձնապես առաջին ցրտից հետո:

Բերքն ամեն տարի առատ է լինում, յերբեմն հասնելով միջին բերքատվության ժամանակ հասնում է մինչև 7 հազար տոննի, իսկ լրիվ բերքատվության դեպքում մինչև 11 հազար տոննի: Հրշակի պտուղները մնում են ծառերի վրա շատ յերկար և ամուր, ստիպված նրանց պիտի հավաքել ձեռով, բայց առաջին ցրտերից հետո հնարավոր է հավաքել թափ տալով:

Հրշակի չորացրած պտուղները կարող են ծառայել վորպես հումուսթ թեյի և սուրճի սուրագատներ պատրաստելու համար:

VI ՍԵՐԿԵՎԻԼ.

Վայրի սերկևիլն հանդիպում է ներքևի, ծովի մակերևույթից մինչև 600 մետր բարձրությամբ զոնաներում և Լենքորանի, Ղուբայի, Նուխու և այլ տեղերի անտառային հոծությունների արևելյան թեքվածքներում: Սովորաբար այն բազմաբուն, մինչև 4 մետր բարձրությամբ թուփ է:

Վայրի սերկևիլի բերքատվությունը շատ թույլ է, 2—10 պտուղ յուրաքանչյուր թփի վրա: Մի դեպքում նրանք գնդաձև են, մի ուրիշ դեպքում տանձաձև մի քիչ հաստակողով ու կիտրոնա-դեղնավուն մաշկով, յերբեմն էլ թեթև կարմրությամբ: Նրանց մեծությունը հասնում է 3-ից մինչև 5 սանտիմետրի:

Լրիվ բերքատվության տարին ընդհանուր բերքը ԱՍՅԽՆՆ-ում հասնում է 700, իսկ միջակ բերքատվության դեպքում 300 տոննի:

Մթերման տեսակետից վորպես պտղա-հումուսթ ժողովրդական անտեսության մեծ սերկևիլի բերքը չունի մեծ նշանակություն:

VII ՊՏՈՒՂՆԵՐԻ ՀԱՎԱԲԵԼԸ, ՊԱՅԵԼԸ ՅԵՎ ՏԵՂԱՓՍԻԵԼԸ.

Պտուղների հավաքելը: Վայրիաճ կտկայիններից վերամշակում մից ետո վորակով բարձր արտադրանք ստացվում է այն պը-

տուղներից, վորոնք հասել են նորմալ հասունության: Նրա հիման վրա էլ վերամշակման համար պետք է այն պտուղները հավաքել, վորոնք բավականաչափ հասած են: Այն դեպքում, յերբ առանձին ծառերի հասած պտղաբերքը մեծ չէ, հարկավոր է սպասել, մինչև վոր կը հասնի վոչ պակաս բերքի կեսը և հետո միայն սկսել հավաքել:

Առատ բերք ունեցող ծառերից հավաքը պետք է կատարել յերկու հերթի. յերկրորդ հերթը 5—10 որ ժամանակամիջոցից հետո, այնպես, վոր սկզբում հավաքվի վաղ հասած պտուղները, իսկ հետո, յերկրորդ հերթին, մի քանի որ անցած — ուշ հասածները: Այդ առանձնապես վերաբերում է խնձորներին և տանձերին:

Սովորաբար վայրիաճ կտկայինների պտուղների հավաքը կատարվում է ծառը թափ տալու միջոցով: Նորմալ հասունության հասած խնձորների և տանձերի պտղակոթերը հանդիստ և հնչտ աղատվում են ճյուղերից և հավաքման գործողությունը կատարվում է արագ ու առանց դժվարությունների:

Յեթե սկսում են պտուղների հավաքը յերբ դեռ նրանք չեն հասել նորմալ հասունության, այդ դեպքում թափ տալը դժվարանում է և հավոքողներն ստիպված են նման դեպքում յերկար ձողի ողնությամբ ճյուղերին հարվածելով թափ տալ, վորն առաջացնում է պտուղներին և պտղիկներին վնասվածքներ:

Նախքան ծառը թափ տալը, առաջուց պետք է հավաքել նրա տակը թափված ժամանակից շուտ ընկած պտուղները (թափուկները) և միայն հետո սկսել ծառի ամբողջ բերքի թափ տալը:

Մինչև թափ տալը, թափուկների հավաքը պետք է կատարել հետևյալ պատճառներով. սովորաբար մինչև պտուղների հավաքը ծառից թափվածները մեծ մասամբ լինում են վնասվածները, վորոնք վորոշ ժամանակ գետնի վրա ընկած լինելու հետևանքով լվկել կամ փչացել են: Այդպիսի պտուղները փափուկ են լինում և տեղափոխության դեպքում քիչ են դիմացկուն, դրա համար է հարկավոր չեն նրանց խառնել միևնույն կույտի մեջ լավ պըտուղների հետ միասին: Այդպիսի պտուղները լավերի հետ խառը տեղափոխելու ժամանակ ուժեղ կերպով ճխրվում են, բացի դրանից կարող են վարակել հոտելու պրոցեսսով մնացած բոլոր պըտուղներին: Մեկ էլ պետք է ի նկատի ունենալ, վոր ընդունման կետում թափուկները վերամշակման համար թողնվում են առաջին հերթին:

Թափուկները հավաքելու հետ միասին, ծառի տակից պետք է հավաքել և հեռացնել ընկած բոլոր փչացած պտուղները:

Այն անտառներում, վորտեղ ծառերի տակը չկա խոտեգորի և ծառերն ել չեն գտնվում անտառի խիտ մասում, խուշո տալու համար կեղտոտվելուց և նախազդուշանալու համար պտուղները ծառից վայր ընկնելիս խփվելուց, հավաքելիս, թափ տալու ժամանակ պետք է մեծ քաթան գործածել:

Ծառերից պտուղներ թափելը, վորտեղ կանոն պետք է կատարել առավոտյան և կեսօրից հետո: Յերբ թափ է տրվում կեսօրին, մանավանդ շոք որերին, արևից տաքացած պտուղներն ընկնելու ժամանակ ավելի յնն փչանում, վորի հետևանքով ել բարձրանում է ճզմված և խփված պտուղների տոկոսը:

ԱՍՑԽՀ անտառներում վայրի պտուղների բերքը լավ յուրացնելու համար նրանց հավաքը պետք է կատարել կոլխողնիկներից և անհատականներից հատուկ խմբեր և բրիգադներ կազմակերպելու միջոցով, առավելագույն չափով ոգտազործելով կոմերիտներին և պիոներներին, դրանց հետ ել կանանց:

Այսպիսի կոլեկտիվ հավաք պետք է կատարել փորձված աշխատակիցների ղեկավարությամբ: Հավաքի ժամանակ առավելագույն չափով պետք է նրանց մեջ ամրացնել աշխատանքի սոցիալիստական մեթոդները — սոցմրցում, հարվածայնություն և այլն:

Պտուղների սեսակավորելը: Հաշվի առնելով, վոր մթերման կետերը բերված պտուղներն ոգտազործվում են վերամշակման համար, վոչ բոլորը միասին, այլ կամաց կամաց, կախված բերված պտուղների քանակությունից, դրա հետ միասին, մեծ քանակությամբ կուտակելու հետևանքով մի քանի խմբեր պետք է պահվեն յերբմի շաբաթներով, հավաքելու ժամանակ, պետք է պլուտուղները տեսակավորեն 3 տեսակի:

Առաջին տեսակի մեջ ընտրվում են ավելի խոշոր և առողջ պտուղները, յերկրորդին՝ մանրերը և յերրորդին՝ ճզմվածներն ու պակասություն ունեցողները: Լիկված կամ հոտած պտուղները բոլորովին դեն են նետվում:

Յեթե վերամշակման կետում չորացնելու հետ միաժամանակ կատարվում է նույնպես և վայրի պտուղների սերմերի մթերում, այդ դեպքում լիկված և փթած պտուղները ևս պետք է հավաքել և առանձին բերել ընդունող կետերը նրանցից սերմերը հանելու կամ թե սպիրտ քաշելու և քացաղ պատրաստելու համար:

Նման տեսակավորման դեպքում ընդունող կետերում հնարավոր է դառնում ավելի ճիշտ կատարել վերամշակումը, թույլ չը տալով պահելու ժամանակ փչանալու և վոչ ել ընդհանրապես պլուտուղներն հոտելու կամ փթելու: Սովորաբար ընդունող կետերում առաջին հերթին վերամշակման են թողնում պակասություն ունեցող և ճրխված պտուղները, յերկրորդ հերթին — խոշոր, հասուն պտուղները, վորպես ավելի քիչ դիմացկուն և վերջին հերթին մանր պտուղները, վորպես ավելի դիմացկուն: Յոշոր և հասուն պտուղների ընտրությունը պիտի կատարել և այն նկատառումով, վոր խոշոր պտուղներից ստացվում է ավելի լավ հատկությամբ չորացրած արտադրանք, վորը գնում է շուկա վորպես կամպոտի ապրանք ավելի բարձր գնով:

Պահելը, միմչել սեղափոխելը: Յեթե հավաքած պտուղները մինչև նրանց ընդունող վերամշակման կետերը փոխադրելը ստիպված ենք մի քանի որ պահել անտառում, այդ դեպքում պետք նրանց տեսակավորված ձևով դասավորենք սովերոտ, բայց լավ ոգտափոխության յենթակա տեղերում վոչ մեծ, բարձր կույտերով — 30—40 սանտիմետրից վոչ բարձր շերտով, խուշո տալու համար պտուղների տաքանալն արևից: Կիտուկները պետք է թեթե կերպով ծածկել կանաչ ճյուղերով: Սակայն վորպես ընդհանուր կանոն, ըստ հնարավորության հավաքած պտուղները պետք է տեղափոխել ընդունման կետերը նույն որը կամ համեմայն դեպս վոչ ուշ քան յերկրորդ որը:

Հավաքած թարմ և դեռ չը պառկած պտուղները հեշտությամբ են տանում ամեն տեսակի ցնցումներ և ավելի քիչ են ճրխվում տեղափոխության ժամանակ: Մի քանի որ կույտերով մնացած պտուղները դառնում են փափուկ և տեղափոխման ժամանակ փչանալու և ճրխվելու կորուստի մեծ տոկոս են տալիս:

Տեղափոխությունը: Հավաքած պտուղները տեղափոխվում են ընդունող կետերը վոչ մեծ տարողություն ունեցող — համեմայն դեպս, 30—40 կիլոգրամից վոչ ավել, տափակ դամբյուղներով կամ արկղերով: Այն դեպքում, յերբ անտառում հավաքած պլուտուղների տեղափոխությունը կատարվում է բեռնակիր անասունների միջոցով մեջքի վրա, պետք է ձեռք բերել լավ դամբյուղներ կամ ամուր շինած արկղեր այնպիսի մեծությամբ, վորպեսդի մի կենդանու վրա տեղավորվի մեկական դամբյուղ (կամ արկղ) կողերից, իսկ յերրորդը՝ վերևից: Սայլերով կամ սայլակառքերով

տեղափոխելու ժամանակ նույնպես հարկավոր է զամբյուղներ կամ արկղներ գործածել:

Յեթե պտուղների տեղափոխությունը կատարվում է սայլ-կերով կամ սայլակառքերով ուղղակի մեջներն լցված ձևով, այդ դեպքում հարկավոր է լցնել հավասար շերտով, տեղավորելով թափել ավելի դիմացիկուն և պինդ պտուղները, իսկ վերևում ավելի քիչ հասածները: Այդ նախադրությունները պետք է առանձնապես ի նկատի առնել և գործածել տանձ տեղափոխելիս, վերովհետև նրանք մեխանիկական վնասվածքներ ստանալուց հետո շատ շուտ փչանում են:

Պտուղների պահելը բնդունող կետերում: Ընդունող կետերը բերված պտուղները լցվում են կիտուկներով ծածկոցի տակ շվաքոտ տեղում կամ փակ, բայց լավ ողափոխման յենթակա շենքերում: Պտուղները դարավում են 40 սանտիմետրից վոչ բարձր հավասար շերտերով, հավասար մեծության կույտերով՝ համաձայն տեսակավորման և վորակի: Ընդունող կետերում աշխատանքը եփանացնելու և արագացնելու համար հարկավոր է ունենալ 2—3 որովա ընթացքում վերամշակման յենթակա քանակության սահմաններում ազատ արկղների կամ զամբյուղների պաշար, նրանց մեջ պտուղը պահելու համար: Ընդունող կետերում, յերբ պտուղները տարվում են կտրտելու կամ չորացնելու աղարատը, յերկրորդ անգամ այն արկղները կամ զամբյուղները լցնելու համար այդպիսի ազատ տարայի ներկայությունը թույլ է տալիս խույս տալու ավելորդ աշխատանք կորցնելուց և ծախսեր անելուց:

Յերբ բերվում է ընդունող կետը վոչ բավականաչափ հասած պտուղներ, հարկավոր է այն պահել կույտերով մի քանի որ, հասնելու համար: Պտուղները վորոշ ժամանակ պահելուց հետո դառնում են ավելի քաղցր, չորացման արագ են յենթարկվում և բացի դրանից այդպիսի ավելի հասած պտուղներից ստացվում է լավ հատկությամբ և բարձր վորակով արտադրանք:

VIII ԿՏԿԱՅԻՆ ՎԱՅՐԻ ՊՏՈՒՂՆԵՐԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՁԵՎԵՐԸ

ԱՍՖՆՆ-ում կտկայիններից յուր ներքին հատկությամբ և քանակությամբ առաջին տեղը բռնում է տանձը, յերկրորդ տեղը խնձորը, հետո զկեռը, հրշակը և վերջին տեղը սերկիկը:

Վայրի կտկայինների ցեղերի պտուղները կարող են ոգտահործվել չոր մրգեր պատրաստելու համար, վորպես կամպոտի

նյութ, կամ վորպես հումուկթ թեյի-սուրճի արտադրության սուրազաթնների: Այդ պտուղներից կարելի յե պատրաստել պտղախմոր, պավիդլո, դոնդոլ, դոշար, դանադան պտղային խմիչքներ, իսկ խնձորենու պտուղներից, բացի դրանցից, մշակում են արտահանական նշանակություն ունեցող նյութ—պեկտին: Կրակայինների պտուղները մեծ արժեք են ներկայացնում նույնպես սերմեր հանելու համար: Վերջինիս պահանջը շատ է պտղային տեղաբանների համար, վորոնք աճեցնում են վայրիները ագնիվցեղերը պատվաստելու համար: Սերկիկի սերմերը գործածվում են բժշկության մեջ վորպես լավ մաղձամիջոց:

IX ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԱՍՖՆՆ-ում վայրի կտկայինների ցեղերը շատ մեծ նշանակություն ունեն ժողովրդական տնտեսության համար, վորպես շատ նշանակալից աղբյուրներ լրացնելու համար աշխատավոր բնակչության սնունդի հավասարակշռությունը, բացառիկ կերպով սնունդի և առողջության համար կարևոր պտղային արտադրանքով:

Հավաքի տեխնիկական կանոնավոր կերպով կազմակերպելու դեպքում, Անդրկովկասում վայրիաճներից միայն կտկային ցեղերի պտուղների մթերումը բերքաբեր տարիներում կարող է արտապտուղների մթերումը բերքաբեր տարիներում: Վայրիաճների ոգտահործման գործի դրվածքը ԱՍՖՆՆ-ում գտնվում է դեռ սաղմային դրության մեջ, Վերջին տարիներս փաստական բերքահավաքը ընդգրկում է առայժմ ամբողջ բերքի 5—10%-ից վոչ ավելի:

Ի նկատի ունենալով, վոր կույտուրային այգիների բերքը ամբողջովին չի ծածկում պտղային արտադրանքի վերաբերյալ աշխատավոր մասնայի բարձր պահանջը, ինչպես կառավարությունն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում բնության պտղային աղբյուրները ոգտագործելու վրա, դրա համար առանձնացնում և դրամական մեծ միջոցներ, արդյունաբերական ապրանքների ֆոնդեր և այլն. կազմակերպելով նույնպես այդ բնագավառում գիտական-հետազոտական ընդարձակ աշխատանքներ:

Վայրի պտուղների հավաքը և նախնական մշակումը ավելի կանոնավոր և ճիշտ դնելու համար, պետք է առաջին հերթին ներդրավին կոլխոզնիկների և մեխատնտեսների շրջանային գյուղական ակտիվը, կոմբիտները և բնակչության այլ խմբեր, դրա հետ միասին, ղեկավարությունը պետք է տրվի այդ գործում փորձված աշխատակիցներին:

43554-63



Մի շարք շրջաններում կան իրենց մեջ կտկայինների ցեղեր
պարունակուլ անտառային մեծ հոծություններ: Այդպիսի տեղե-
րում գործադրելով պտղատու ծառերին հարևան այլ ցեղերի ծա-
ռերի ճնշումից ազատելու վերաբերյալ բացիոնալ միջոցներ, տա-
րիներին ընթացքում հնարավոր է ստեղծել հազարավոր հեկտար
անտառա-այգիներ, վերոնց պտղային արտադրանքի բերքն այդ
միջոցով կը շատացվի տասնյակ անգամ:

Բնության պտղային աղբյուրներն առավելագույն չափով
հավաքելու և ոգտագործելու համար, սոցիալիստական ժողովրդ-
դական տնտեսության այդ կարևոր ճյուղի վրա մոբիլիզացիայի
յենթարկելով հասարակական ուշադրությունը, մենք կը կարողա-
նանք աշխատավոր բնակչության սնունդի միջերջների բալանսը
զգալիորեն շատացնել և դրանով ոգնել մեր յերկրի սոցիալիստա-
կան շինարարությանը:





211

20528

9к

5. 8 19

мр1

мр2

Удостоверяет СНК СССР и ЗСФСР

**Дикорастущие плоды Закавказья
как пищевые продукты**

ИЗДАНИЕ ЗАКАВКАЗСКОГО КОНВЕНЦИОННОГО БЮРО

Тифлис—1935 г.

634.9

Ч-62